2126.1113947

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«23» 03 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0061-21

Ձեռնարկողը՝ ***«ԷՄ ՋԻ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ***
Ք Երևան, Բաղյան 1-ին նրբ. 6/6

Գործունեությունը՝ ***Հ. Թումանյանի փուն թանգարանի երկրորդ մասնաշենքի վերակառուցման և հարկերի ավելացման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0061-21

<23> 03 **2021թ.**

Հ. Թումանյանի տուն թանգարանի երկրորդ մասնաշենքի վերակառուցման և հարկերի ավելացման շրջակա միջավայրի վրա ազդցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«ԷՄ ՋԻ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	քաղաք Երևան, Կենտրոն վարչական շրջան, Մոսկովյան 40

«ԷՄ ՋԻ ԴԻԶԱՅՆ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի, Մոսկովյան 40 հասցեում գտնվող Հ. Թումանյանի թագարանի շենքի նորոգում, երկրորդ մասնաշենքի վերակառուցում և հարկերի ավելացման աշխատանքներ (կառուցապատող՝ «Հ.Թումանյան թանգարան» ՊՈԱԿ):

Գործունեությունն իրականացվելու է Երևանի Կենտրոն վարչական շրջանի տարածքում, Մոսկովյան և Թումանյան փողոցների հատման հատվածում, Սարյան փողոցի թիվ 2 և Մոսկովյան փող թիվ 36 և 38 շենքերի միջև:

Նախագծման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի կողմից տրամադրված տեխնիկական առաջադրանքը և Երևանի քաղաքապետի կողմից 22 սեպտեմբերի 2020թ. տրված N01/18-07/1-Հ-8059-888 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

Թումանյանի տուն թանգարանի /ներառյալ անջրանցիկ կառույցների 105քմ մակերեսը/ կառուցապատման մակերեսը կազմում է 1700քմ ուստի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը Գ կատեգորիա է:

Նկարագրական մաս.

Թանգարանի հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 0.17165 հա:

Թումանյանի անվան տուն թանգարանի շենքը ներառում է 3 մասնաշենք որոնց վերակառուցման վերանորոգման աշխատանքների մակերեսը կազմելու 1595.5 քմ, իսկ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

շենքի հարակից տարածքի անջրանցիկ կառույցների անջրանցիկ կառուցապատման մակերեսը- 105.0քմ:

Տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրությունները վկայում են, որ գոյություն ունեցող թանգարանի կառույցի համար հիմք է հանդիսանում անդեզիտային բազալտների շերտը, որոնց ֆիզիկա-մեխանիկական հատկությունների չափորոշիչները համապատասխանում են շինարարական աշխատանքների իրականացման համար:

Բնութագրվող տարածքում և մերձակայքում չկան մակերևութային ջրային մարմիններ կամ առուներ: Հիդրոերկրաբանական տեսակետից կառուցապատվող տարածքում գրունտային ջրերը գտնվում են խորը հորիզոններում:

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ:

Թանգարանի թիվ 1 մասնաշենք՝ իրականացվելու է վնասված կոնստրուկցիաների վերականգնում և վերանորոգում, համաձայն տեխնիկական վիճակի եզրակացության, հուշարձանային կարգավիճակին անհարիր ուշ շրջանում կատարված վերանորոգումների վերափոխում այդ շրջանում մոնտաժված պատուհանների ապամոնտաժում, ջեռուցման ներքին սարքերի փոխարինում, անձրևաջրերի հեռացման համակարգի վերափոխում, նկուղային հարկի վերակառուցում:

Թանգարանի թիվ 2 մասնաշենք՝

- կառուցվելու է երկու լրացուցիչ հարկ համաձայն տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացության, գոյություն ունեցող աստիճանավանդակի կազմաքանդում և նոր աստիճանավանդակի և վերելակի կառուցում, բոլոր հարկերի վերահատակագծում գոյություն ունեցող հարկերի պատերի ջերմադիմադրողականության բարձրացում:

Ծրագիրը ընգրկում է նաև Մոսկովյան փողոցի կողմից պատմամշայթային հուշարձանային կարգավիճակ ունեցող մուտքային աստիճանների և հարակից տարածքի բարեկարգում, հենապատերի, աստիճանների հարթակների և ցանկապատների ակնհայտ դեֆորմացիաների տեղաշարժված քարերի և ճաքերի վերականգնում:

Իրականացվելու է նաև ապակյա ծածկով ձմեռային այգու վերակառուցում, կաթսայատան վերանորոգում և այլն:

Թանգարանի ջեռուցման գործնթացը կազմակերպվելու է վերակառուցվող կաթսայատնից, իսկ գոյություն ունեցող կաթսաներից մեկը կպահպանվի և կօգտագործվի սանհանգույցներում տաք ջրամատակարարման նպատակով:

Թանգարանի գազաֆիկացման և էլեկտրասնուցման գործընթացը կկազմակերպվի գոյություն ունեցող ինժեներական ցանցերի միացմամբ և նոր տեխնիկական պայմանների ստացում չի նախատեսնվում:

Շինարարական աշխատանքների կազմակերպումը.

Ներկայացվող գործունության նախնական փուլում կիրականացվեն թանգարանի տարածքում շինարարական հրապարակի կազմակերպման աշխատանքներ: Շինհրապարակի կազմակերպումը կիրականացվի բացառապես թանգարանի վարչական տարածքի սահմանների ներսում:

Շինհրապարակի կազմակերպումը նախատեսում է՝

- Տարածքի ժամանակավոր մետաղական ցանկապատում
- Հրապարակի լուսավորության ապահովման միջոցառումներ
- Ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքներ
- Շինհրապարակում սանիտարահիգենիկ , կենցաղային և հանգստի պայմանների ապահովում ՝ընդմիջման և հանգստի հարմարություններ, սննդի կետ, խմելու և կենցաղային ջուր. Բիոզուգարաններ. աշղեկի աշխատասենյակ և այլն:

02543163
ՇՐՋԱԿԱՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների պահեստավորման ու կուտակման վայրեր, շինարարական աշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղերի կազմակերպում:

Նախաշինարարական փուլում կիրականացվեն նաև կոմունիկացիաների վերատեղադրման, տեղափոխման և միացման աշխատանքներ գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Վերակառուցման և վերանորգման աշխատանքների կազմակերպում.

Վերակառուցման և վերանորոգման աշխատանքները նախատեսվում է իրականացնել փուլերով:

Փուլ-1՝ թիվ 2 մասնաշենքի վերակառուցում, ներքին բակի և հարակից տարածքների բարեկարգում,

Փուլ-2 թիվ 1 մասնաշենքի, կաթսայատան և բաց այգու վերակառուցման աշխատանքների իրկանացում:

Երկու փուլերի աշխատանքների իրկանացման համար ընդհանուր տևողությունը նախատեսված է 28 ամիս:

Վերակառուցման և վերանորոգման աշխատանքների ընթացքում հողային աշխատանքների կատարում նախատեսված չեն:

Շինարարական աշխատանքները կիրականացվեն մրցութային սկզբունքով ընտրված կապալառուի կողմից:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել գոյություն ունեցող ջրագծից: Պահանջվող էլեկտրաէներգիայի մատակարարումը կիրականացվի Թանգարանի գոյություն ունեցող ինժեներական ցանցից: Շինարարական մեխանիզմների համար անհրաժեշտ վառելիքի քանակը ապահովվելու է շինարարական կազմակերպության պահեստներից, իսկ սեղմված օդը նախատեսվում է մատակարարել շարժական կայանքներից:

Շինարարության ընթացքում կբացառվի շինհրապաւակում բետոնաշաղախային խառնուրդի պատրաստումը: Անհրաժեշտ դասի բետոնախառնուրդի մատակարարումը կիրականացվի բետոնախառնիչներով Երևան քաղաքի շինհրապարակին մոտակայքում գտնվող բետոնաշաղախային խառնուրդ պատրաստող հանգույցներից, կապալառուի հետ կնքված պայմանագրային հիմունքներով և համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով մատակարարման անընդհատությունը:

Հրապարակում սորուն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստուկցիաները (ամրաններ և այլն)՝ հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները՝ հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահապանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան:

Շինարարական աշխատուժի առավելագույն թիվը գնահատվում է 30 մարդ, որից ինժեներական կազմը՝ 2 մարդ և ծառայողական աշխատողներ՝ 3 մարդ:

Բնութագրվող տեղամասը տարածքը արդեն իսկ կառուցապատված է կառույցներով, իսկ մուտքի աստիճաններին հարող հատվածներում ներկայացված է որոշակի բուսահողի ծածկույթով:

Բնութագրվող տարածքը գտնվում է արդեն իսկ յուրացված և զարգացած քաղաքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները: Մուտքի աստիճաններին հարող հատվածներում առկա է որոշակի բուսականություն:

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր

02543163
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

բացասական ազդեցությունները և հնարավոր ռիսկերը գնահատվում են թանգարանի վերակառուցման աշխատանքերի ընթացքում, մասնավորապես՝ գործունեության ընթացքում հիմնականում գնահատվում են անօրգանական փոշու և այլ ծխագազերի արտանետումներ, աղմուկի մակարդակի աճ շինարարական գործողությունների ընթացքում, սակայն նշված ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով գործունեության տարածքը:

Ըստ ազդեցության աստիճանի և ինտենսիվության՝ շրջակա միջավայրի վրա բոլոր բացասական ազդեցությունները և ռիսկերը գնահատվում են մինիմալ և կառավարելի կառուցապատման աշխատանքների ընթացքում՝ հաշվի առնելով նախատեսվող շինարարական աշխատանքների ծավալը և բնույթը:

Թանգարանի վերակառուցման և վերանորոգման գործողությունները կառաջացնեն անօրգանական փոշու արտանետումներ: Հաշվի առնելով այն, որ ներկայացվող գործունեության ընթացքում հողային աշխատանքներ չեն նախատեսվում անօրգանական փոշու արտանետումների հաշվարկներ սույն հաշվետվությունում չեն ներկայացվում:

Շինարարական գործողությունները կառաջացնեն որոշակի աղմուկ, սակայն աղմուկի հնարավոր մակարդակները չեն գերազանցի ՀՀ ազգային նորմերը:

Շինարարական աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին՝ 14:00-ից 18:00: Հաշվի առնելով շինարարական գործողությունների բնույթը՝ թրթռումների բարձրմակարդակներ չեն կանխատեսվում:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինաշխատանքների կազմակերպման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալուհամար:

Թանգարանի վերակառուցման աշխատանքների ընթացքում առաջացած հնարավոր փոշու մակարդակները կնվազեցվեն ջրցանի իրականացմամբ:

Շինարարական աշխատանքներում և բանավորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը կվերցրվի թանգարանի գործող ջրագծից:

Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություններ ջրային համակարգերի վրա չեն կանխատեսվում, քանի որ տեղամասին կից չկան ազդեցության ենթակա ջրային մարմիններ: Անուղղակի ազդեցություններ ջրային համակարգերի վրա ևս չեն կանխատեսվում, քանի որ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ՝ բացառելու շին-մեքենաների երթևեկության ընթացքում հնարավոր արտանետումներ: Հնարավոր կեղտաջրերի առաջացման դեպքում հրապարակում կպահվի կեղտաջրերի հեռացման համար նախատեսված տարա (≥5 խ.մ տարողությամբ), որտեղ կեղտաջրերի (բետոնաջրեր և այլն) հետերոգեն զանգվածի նստեցումից հետո, վերջիններս հնարավոր կլինի շին աղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ դեկանտված ջուրը՝ օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում:

Թանգարանի շենքի վերակառուցումից առաջացած շին թափոնները կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի որոշմամբ նախատեսված Սպանդարյան արդյունաբերական հանգույցի տարածքում գտնվող քաղաքային աղբավայր: Ընդհանուր առմամբ վերակառուցման արդյունքում կգոյանա շուրջ 475տ շինարարական աղբ:

Գործունեության ընթացքում գոյացած կենցաղային աղբը (գնահատվում է ≤5 կգ/օր) կհավաքվի հրապարակում տեղադրվող կենացաղային աղբի համար նախատեսվող տարաներում և կանոնավոր կերպով կհեռացվի հասարակական աղբամաններ:

Շինարարության ողջ ընթացքում առաջացող յուղերի բանեցված մնացորդները (գնահատվում են ≤10 լ) կհավաքվեն և կպահվեն հերմետիկ փակ և մետաղական տարաներում, իսկ հետագայում կհանձնվեն վերջիններիս վերամշակմամբ զբաղվող

ՀՀ ԲՆԱԿԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

լիցենզավորված կազմակերպության: Հրապարակում քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մատաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը:

Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական շարժական մեքենասարքավորումների վառելիքի լիցքավորումը և քսայուղման գործողությունները հնարավորինս կիրականացվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի նվազեցվի հրապարակում հեղուկ նյութերի արտահոսքերով պայմանավորված հնարավոր ռիսկերը և կրճատվեն/կառավարվեն հեղուկ թափոնների մնացորդային քանակները:

Շինարարական աշխատանքների ընթացքում կբացառվեն բուսահողի վրա այլ անուղղակի ազդեցությունները, ինչպիսիք են՝ շինաղբի տեղադրում կամ կեղտաջրերի հեռացում և այլն:

Նախատեսվող գործունեության ընթացքում մեքենա- սարքավորումների լիզքավորումը, քսայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողությունները հնարավորինս կիրականցվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և հնարավոր ռիսկերը:

Շինհրապարակը լքելիս կիրականացվի մեքենաների անվադողերի լվացման և մաքրման միջոցառումներ, որպեսզի բացառվի հանրային ճանապարհների վրա ցեխի և փոշու տարածման ռիսկերը: Առաջացած կեղտաջրերը կհավաքվեն հատուկ տարողություններում իսկ մեխանիկական մասնիկների նստվածքից հետո կուղղվեն հեղեղատար:

Գործունեության ընթացքում մեծ անդրադարձ կկատարվի հանրության անվտանգության և առողջության, ինչպես նաև շինարարական կազմակերպության աշխատողների անվտանգության և առողջության ապահովման հարցերին շինհրապարակում, որի համար նախատեսված են մի շարք միջոցառումներ հնարավոր ազդեցությունները և անհարմարությունները բացառելու կամ մեղմացնելու նպատակով:

Հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով պարբերաբար շինարարական տեղամասում կիրականացվեն միջոցառումներ:

Ներկայացվող գործունեության ԲՄԾ-ի պատշաճ մակարդակով իրականացումը կկանխարգելի և/կամ կնվազեցնի գործունեության ընթացքում կանխատեսվող անցանկալի բացասական ազդեցությունները և ռիսկերը շրջակա միջավայրի վրա՝

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- շինարական աղբի կանանոնավոր հեռացում քաղաքային աղբավայր,
- կիրականցվի շինարարական հրապարակի ջրցանում և կկառավարվեն փոշու արտանետումները ՀՀ թույլատրելի նորմերի սահմանում, ինչպես նաև հրապարակը լքելիս կիրականցվեն մեքենաների անիվների լվացման/մաքրման միջոցառումներ,
- շինարարական մեքենաների տեղաշարժը կիրականացվի սահմանափակ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- շինարարական նյութերի ձեռք բերում կիրականացվի լիցենզավորված մատակարարներից, ներառյալ՝ բետոնաշաղախը՝ Երևան քաղաքին մոտակա հանգույցներից,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ընթացակարգերը և կոնտակտային տվյալները պաստառների ձևով կտեղադրվեն հրապարակի տեսանելի վայրերում,
- կիրականացվի հարակից տարածքի վերականգնում՝ ըստ մշակված և համաձայնեցված նախագծի:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն նախնական հայտի նախատեսվող արտադրական նշանակության շինությունների վերակառուցումը, պահեստային շինությունների և պարիսպը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

փոլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանը, շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Մ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:»:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը և պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Էմ Ջի Դիզայն» ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի, Հ. Թումանյանի տուն թանգարանի երկրորդ մասնաշենքի վերակառուցման և հարկերի ավելացման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝ Յու. Մատինյան